

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԽՐԱՆՔԸ*

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Բանալի բառեր՝ բարբառ, լեզվի պատմություն, ընդհանուր լեզվաբանություն, բառարան, Մեյե, Հյուբերման, անձնանուն, հնդեվրոպական լեզուներ, լիակատար քերականություն:

Ամփոփում

Հրայյա Աճառյանի հեղինակած մեծաթիվ գիտական աշխատանքներն ընդգրկում են հայերենի ուսումնասիրության բոլոր բնագավառները: Նա հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է: Հայ բառարանագրության, հայերենի ստուգաբանության, հայ անձնանունների ուսումնասիրության, հայերենի պատմական ու համեմատական քերականության, տիպարանական-զուգադրական հետազոտության և շատ այլ ոլորտներում Աճառյանի կոթողային աշխատությունները հայերենագիտության համար ունեն հիմնարար և ուղենշային նշանակություն: Հսկայական է անվանի հայագետի մանկավարժական վաստակը: Երկարամյա ուսուցչական գործունեության, դասախոսական աշխատանքի ընթացքում նա իր գիտելիքները անմնացորդ հաղորդել է աշակերտների, ասպիրանտների բազում սերունդների: Որքան մեծ ու հզոր էր Աճառյանը իբրև գիտնական, նույնքան վեհ ու բարձր էր իբրև մարդ: Նրան հատուկ են եղել անսպառ բարոյությունն ու մարդասիրությունը, բարյացակամությունը, հայրենասիրությունը, պարզությունն ու համեստությունը: Աճառյանը այժմ է ընկել հումորի մեծ զգացումով և կենսուրախությամբ, մարդկանց նկատմամբ հոգատարությամբ:

Ընդհանուր և հայ լեզվաբանության տարբեր ուղղություններում Հ. Աճառյանի հսկայական ներդրումը գիտնականների շատ սերունդների համար հետազոտություններ կատարելու հաստատուն հիմք ու մեկնակետ է դարձել և դեռ բազում սերունդների համար է կատարելու այդ դերը:

* Ներկայացվել է 10. 11. 2026 թ., գրախոսվել է 11. 11. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. 11. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Նախաբան

Հայագիտության մեջ բացառիկ է Հրայր Աճառյանի գիտական վաստակի դերն ու կշիռը՝ տեսական հարցադրումների խորությամբ ու ընդգրկումով, գործնական բազմապիսի խնդիրների առաջադրումով ու լուծումներով, տարբեր գիտաճյուղերի ուսումնասիրության համակողմանիությամբ ու ամբողջականությամբ: Նրա ծավալուն կոթողային աշխատություններից յուրաքանչյուրը տվյալ ուղղության հետազոտական արդյունքների յուրօրինակ ամփոփում է և հիմք ու մեկնակետ հետագա ուսումնասիրությունների համար: Հայերենագիտության ոլորտում Աճառյանը գիտական մտքի զարգացման ընթացքի մասնակից ու մշակ չէր միայն, նա դարձավ այդ ընթացքի հմուտ առաջնորդն ու ուղղորդողը: Գ. Զահուկյանի գնահատմամբ՝ «Հ. Աճառյանը եղավ մեր առաջին իսկական մասնագետ-լեզվաբանը, որ նշանավորեց հայագիտության զարգացման մի ամբողջ շրջան, ի մի բերեց կարևորագույն աշխատանքների արդյունքները, բաց արեց ուսումնասիրության նոր ասպարեզներ, մեծ չափով նպաստեց հայագիտության հետագա առաջընթացին»¹:

Կենսագրությունը

Հ. Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլիսում՝ կոշկակար Հակոբի ընտանիքում: Մեկ տարեկանում, արևին երկար նայելով, երկու աչքով կուրանում է: Հնարավոր է լինում բուժել միայն մեկ աչքը, և, ինչպես ինքն է հուշերում ասում, ահագին Արմատական բառարանը, հինգ հատոր Անձնանունների բառարանը, տասը հատորանի Լիակատար քերականությունը և այլն, մի աչքի արդյունք են²: Աճառյանը նախնական կրթությունը ստացել է Սամաթիայի Արամյան, ապա՝ Սահակյան վարժարաններում: Վաղ հասակից հետաքրքրվել է լեզուներով, իրենց փողոցի հույն նպարավաճառից խնդրում է հունարենի այբուբենը և սովորում այդ լեզվով կարդալ, մի քանի փողոց այն կողմ ապրող հրեա փերեզակից էլ խնդրում է եբրայերեն տառերը և սկսում կարդալ նաև այդ լեզվով, միաժամանակ հարևանի որդու օգնությամբ անգլերեն է ուսումնասիրում: Իսկ դպրոցում սովորում է թուրքերեն և ֆրանսերեն: 1889 թ. ընդունվում է Կ. Պոլիսի Կեդրոնական վարժարան, որը ժամանակի հայագիտական կրթության լավագույն օջախներից էր: Այստեղ նա ոչ միայն գրաբար է սովորում, այլ նաև ուսումնասիրում ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն: Իր գիտական հետաքրքրությունները ապագա մեծանուն հայագետը դրսևորում է հենց Կեդրոնականում սովորելու տարիներին: Այդ առումով երախտագիտությամբ է հիշատակում ուսուցչի՝ Եղիա Տեմիրճիպաշյանի անունը, որը ողջունում էր նրա գիտական պրպտումները և ոգևորում: Աճառյանը վկայում է, որ վարժարանում ուսանելիս արդեն ուներ Արմատական բառարանի առաջին ուրվագիծը, այդ շրջանում է ձեռնարկել նաև Գավառական բառարանի ստեղծումը, ազդվելով գերմանացի լեզվաբան Ֆ. Բոպպի քերականությունից՝ նույնիսկ ցանկացել է կազմել ուգրո-ֆիննական և ուրալ-այթայան լեզուների համեմատական քերականությունը³: Օգտվելով ստեղծված

¹ Զահուկյան. 1978, 14:

² Աճառյան. 1967, 22:

³ Աճառյան. 1967, 108:

հնարավորությունից՝ լազ հարևանների ներկայությունից, մի ծերունուց տվյալներ է քաղում լազերենի վերաբերյալ, պատրաստում լազերենի մասին աշխատություն՝ դառնալով այդ լեզվի առաջին լուրջ ուսումնասիրողը⁴: Այսպիսով, այդ շրջանում ի հայտ են գալիս նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղությունները՝ լեզվի պատմություն և բառարանագրություն, բարբառագիտություն, ընդհանուր ու համեմատական լեզվաբանություն: 1893 թ. Աճառյանը, ավարտելով իր ուսումը Կեդրոնական վարժարանում, իբրև ուսուցիչ աշխատանքի է անցնում Գաղղ գյուղի Արամյան դպրոցում, մեկ տարի անց՝ Կարինի Սանասարյան վարժարանում: Այստեղ նա ոչ միայն դասավանդում է, այլ նաև շարունակում է տարբեր լեզուների ուսումնասիրությունը (հունարեն, լատիներեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, պարսկերեն, չաղաթայերեն)⁵: 1895 թ. վերադառնում է Կ. Պոլիս, ապա մեկնում է Փարիզ՝ ուսանելու Սորբոնի համալսարանում: Այստեղ աշակերտում է ժամանակի նշանավոր հնդեվրոպաբաններից մեկին՝ հայագետ Անտուան Մեյեին: Վերջինիս առաջարկով Աճառյանը ֆրանսերեն է թարգմանում դեռևս Կ. Պոլիսում պատրաստած լազերենի քերականությունը և բառարանը, որը Մեյեին «Etude sur la langue laze» վերնագրով ներկայացնում է Փարիզի լեզվաբանական ընկերությանը: Աշխատությունը նախ մաս-մաս հրատարակվում է ընկերության «Տեղեկագրում», ապա՝ հրատարակվում առանձին գրքով: Աճառյանն ընտրվում է այդ ընկերության անդամ: Համալսարանում նա ուսումնասիրում է զենդերեն, սանսկրիտ, արաբերեն, փորձառական ձայնաբանության դասեր է առնում արբա Ռուսլոյի մոտ և փորձառական ուսումնասիրության ենթարկում հայերենի պայթական բաղաձայնները տարբեր գավառներից եկած հայ ուսանողների արտասանությամբ՝ այդպիսով դառնալով ոչ միայն փորձառական հնչյունաբանության հիմնադիրը հայ իրականության մեջ, այլ նաև փորձառական մեթոդի առաջին կիրառողը բարբառագիտության ոլորտում: Հետազոտության արդյունքները ներկայացվում են 1899 թ. Փարիզում լույս տեսած՝ Աճառյանի «Les Explosives de l'ancien arménien étudiées dans les dialectes modernes» աշխատության մեջ (աշխատակցությամբ Ռուսլոյի և Մեյեի): Իր ուսումնառության ընթացքում Աճառյանը շատ դժվարություններ է ունենում. մի որոշ ժամանակ ստիպված է լինում ապրել ութհարկանի շենքի կտորի տակի՝ պատուհան չունեցող խցիկում՝ օրական ուտելով մի փոքր կտոր հաց և երկու փոքր գազար: Իր բնորոշմամբ՝ այդ «թշվառ» օրերին ստիպված է եղել խանութից գետնապիստակ գնել, խորովել և փորձել վաճառել՝ գիշերները անցկացնելով սրճարանների առաջ: Այդպիսով հնարավոր է եղել օրական վաստակել չնչին գումար, որը թույլ է տվել մի կերպ գոյությունը պահպանել: Այդ ամենը անհետևանք չի մնում, և Աճառյանի առողջական ընդհանուր վիճակը, նաև՝ տեսողությունը վատանում է: Բարեբախտաբար ելք է գտնվում. Աճառյանը սկսում է մասնավոր դասեր տալ, որի շնորհիվ կարողանում է այդ վիճակից դուրս գալ: Ամեն ինչից անկախ՝ հայագետի հետազոտական պրպտումները դադար չեն ունենում: Փարիզյան շրջանում, շփվելով զանազան տեղերից եկած ուսանողների հետ, նա տեղեկություններ է հավաքում տար-

⁴ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 139–141:

⁵ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 143:

բեր գավառների բարբառային խոսքի վերաբերյալ և գրում է իր անդրանիկ բարբառագիտական ուսումնասիրությունը՝ «Քննություն Ասլանբեկի բարբառի», որը հրատարակվում է «Բազմավեպ»-ում 1898 թ.: 1897 թ. Աճառյանը մասնակցում է արևելագետների՝ Փարիզում գումարված կոնգրեսին, ընդ որում՝ մասնակցության համար պահանջվում էր 20 ֆրանկ, որը նա ձեռք է բերում՝ վաճառելով իր անկողինը: Հետագա երեք ամիսներին նա քնում է քարե հատակին փռված թերթերի վրա՝ առանց վերնակի, գլխի տակ բարձի փոխարեն ունենալով մի երկու գիրք: Կոնգրեսում նա հանդես է գալիս երկու զեկուցումով, որոնք գրավում են նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանի ուշադրությունը: Վերջինս Աճառյանին հրավիրում է Ստրասբուրգ՝ լսելու իր դասախոսությունները: 1898 թ. Աճառյանը մեկնում է Ստրասբուրգ և Հյուբշմանի ցանկությամբ դասախոսություններ է լսում ոչ թե համալսարանում (ինչի համար անհրաժեշտ էր վարձ վճարել), այլ հայագետի տանը: Վեց ամսում ավարտելով Հյուբշմանի՝ հայերենի համեմատական քերականության դասընթացը՝ Աճառյանը գալիս է Հայաստան: Նախ դասավանդում է Էջմիածնում (1898–1902), այնուհետև ուսուցչություն է անում Շուշիում (1902–1904), Նոր Բայազետում (1906–1907), Նոր Նախիջևանում (1907–1919), Թեհրանում (1919–1920), Թավրիզում (1904–1906, 1920–1923): Այս տեղափոխությունների մասին հայագետը գրում է. «Իմ ամենամեծ ցանկությունս էր ապրել Կովկասի զանազան հայաշատ վայրերում և սովորել նրանց բարբառը»⁶: Որտեղ էլ եղել է Աճառյանը, նրա ուշադրությունից չեն վրիպել բարբառային իրողությունները: Օրինակ, Շուշիի իր գործընկերներից մեկի մասին, որը ծնունդով Գանձակի գյուղերից էր, Աճառյանը գրում է. «Գարեգին վարժապետը արտասանության մեջ մի զարմանալի ձև ուներ. օրինակ՝ *հիվանդ* բառը չէր արտասանում *հիվանդ* ձևով, ինչպես բոլորս արտասանում ենք, այլ *հիուանդ*: Երբ մի օր հարցրի նրան, թե ինչու այդպես եք հնչում, պատասխանեց, թե մեր գյուղում բոլորը այդպես են հնչում: Ուրեմն և տառի հին հնչումն էր, որ դեռ կենդանի էր մնացել նրանց մոտ»⁷: Իսկ Թավրիզի լեզվական յուրահատկությունների մասին (1904–1906 թթ. տվյալներով) նա տեղեկացնում է. «Հայերը թվով 5000 շունչ են և գրավում են երկու առանձին թաղ՝ Ղալա և Լիլավա: Բուն հին թաղը Ղալան է, որի բնակիչ հայերը իսկական թավրիզեցի են և ունեն իրենց բարբառը. նրանք որոշվում են հ>խ արտասանությամբ, իսկ Լիլավա թաղի հայերը ուշ ժամանակ գաղթել են Ղարաղաղից և Մուժամբարից, որ մի հայաբնակ գյուղ է Թավրիզից դեպի հյուսիս: Լիլավացիք էլ խոսում են Ղարաղաղի բարբառը, որ Ղարաբաղի բարբառի մի տեսակն է»⁸: Աճառյանն իր ուսուցչության ընթացքում շարունակում է հետազոտական աշխատանքները, նաև իր պարապմունքների նյութերի հիման վրա է պատրաստում աշխատություններ: Այսպես, Ղալայի դպրոցում դասավանդելով հայոց նոր գրականություն առարկան՝ աշակերտների համար թելադրած նյութերի ընդարձակմամբ տպագրության է հանձնում «Պատմություն հայոց նոր գրականության» գրքի պրակները:

⁶ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 253:

⁷ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 262:

⁸ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 287:

1923 թ. Աճառյանը հրավիրվում է Երևանի պետական համալսարան և այնտեղ աշխատում մինչև կյանքի վերջ (1953 թ.): Դասավանդում է ընդհանուր լեզվաբանական, հայագիտական ու արևելագիտական առարկաներ՝ գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, լեզվաբանության ներածություն, համեմատական քերականություն, արևելյան լեզուների պատմություն ու Արևելքի պատմություն, հայ բարբառագիտություն և հայոց լեզվի պատմություն: 1924 թ. նա Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր էր, 1933 թ. ստացել է գիտությունների դոկտորի և վաստակավոր գիտնականի կոչումներ: Արևելյան լեզուների և գրականության բաժնի հիմնադրումից հետո (1940 թվականից սկսած) եղել է արևելյան բանասիրության ամբիոնի վարիչ: 1937 թ. ընտրվել է Չեխոսլովակիայի արևելագիտական ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ, 1943 թ., երբ հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան, Աճառյանը դառնում է ակադեմիայի իսկական անդամ: Ստալինյան բռնաճնշումները Աճառյանին ևս չեն շրջանցել. իբրև ճակատագրի հեզնանք՝ մեծ հայրենասերը և քաղաքացին, հանճարեղ գիտնականը մեղադրվել է հակահեղափոխական, հակախորհրդային, ազգայնամոլական գործունեություն ծավալելու համար, 1937 թ. ձերբակալվել է, 1939 թ. արդարացվել և վերադարձել տուն:

Մեծանուն գիտնականը հրապարակել է շուրջ 250 գիտական աշխատանք, որոնք ընդգրկում են հայերենի ուսումնասիրության բոլոր բնագավառները: Նա հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է: Հայ բառարանագրության, հայերենի ստուգաբանության, հայ անձնանունների ուսումնասիրության, հայերենի պատմական ու համեմատական քերականության, տիպաբանական-զուգահեռական հետազոտության և շատ այլ ոլորտներում Աճառյանի կոթողային աշխատությունները հայերենագիտության համար ունեն հիմնարար և ուղենշային նշանակություն: Հսկայական է անվանի հայագետի մանկավարժական վաստակը: Երկարամյա ուսուցչական գործունեության, դասախոսական աշխատանքի ընթացքում նա իր գիտելիքները անմնացորդ հաղորդել է աշակերտների, ասպիրանտների բազում սերունդների: Աճառյանի բացառիկ աշխատասիրությունն ու նվիրումը այսպես է գնահատել Գ. Ջահուկյանը. «Շուրջ վեց տասնամյակ վաղ առավոտից մինչև ուշ երեկո, միայն ամենաանհրաժեշտ ընդմիջումներով, նա աշխատեց հանուն հայագիտության, հանուն լեզվաբանության, հանուն հայոց լեզվի ուսումնասիրության՝ կատարելով այնքան գործ, որքան հագիվ թե ի վիճակի լինի կատարելու որևէ այլ անձնավորություն»⁹:

Որքան մեծ ու հզոր էր Աճառյանը իբրև գիտնական, նույնքան վեհ ու բարձր էր իբրև մարդ: Այդ մասին ամենից լավ վկայել են նրա գործը լավագույնս շարունակած աշակերտները: Գ. Ջահուկյանը գրում է. «Անսպառ բարություն և մարդասիրություն, զգայուն սիրտ և բարյացակամություն, լայնախոհ հայրենասիրություն, բնական պարզություն և համեստություն, հումորի երբեք չթուլացող զգացում և կենսուրախություն, բոլոր իրավիճակներում իր մարդկային արժանիքները պահպանելու կարողություն, մերձավորների նկատմամբ ծայրահեղ հոգատարություն, աշակերտներին իր բոլոր գիտելիքները մինչև վերջ նվիրաբերելու և

⁹ Ջ ա հ ու կ յ ա ն. 1978, 5:

բոլորին օգնելու պատրաստակամություն, – այսպիսին էր Աճառյան մարդը»¹⁰: Իսկ Է. Աղայանը փաստում է. «Ամբողջ կյանքում նա հավատարիմ մնաց իր ուխտին և ծառայեց իր ժողովրդին իբրև ուսուցիչ և գիտնական, լիովին վարձատրված ու գնահատված երախտագետ ժողովրդից»¹¹:

Աճառյանը հայ բարբառագիտության հիմնադիր

Հրայա Աճառյանի գիտական հետաքրքրությունների առանցքում միշտ եղել է բարբառային լեզուն: Նա բարբառներին անդրադարձել է ոչ միայն դրանց նվիրված առանձին մենագրություններով (Ասլանբեկի, Ղարաբաղի, Վանի, Մարաղայի, Ագուլիսի, Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի, Համշենի, Առտիայի, Կ. Պոլիսի, Կիլիկիայի, Սվեդիայի բարբառներ), այլ նաև ընդհանրացնող աշխատություններով ու բառարաններով: 1909 թ. ֆրանսերեն հրատարակվում է “Classification des dialectes arméniens” աշխատությունը, որն իբրև ատենախոսություն Աճառյանը ներկայացրել էր Սորբոնի համալսարանին: 1911 թ. լույս է տեսնում այս աշխատության ընդլայնված և վերամշակված հայերեն տարբերակը՝ «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)» խորագրով: Այս աշխատությունը հայերենի բարբառների առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունն էր, որով և հիմնադրվում է հայ բարբառագիտությունը իբրև հայերենագիտության առանձին բնագավառ: Աշխատության մեջ Աճառյանը քննում է բարբառների ուսումնասիրության պատմության ու տեսության հարցեր, նկարագրում է 31 բարբառներ և բերում դրանցով նմուշներ: Բայց առավել կարևոր է, որ կատարում է այդ բարբառների ձևաբանական դասակարգում: Սխալ և անհարմար համարելով հայերենի բարբառները արևելյան ու արևմտյան ճյուղերի բաժանելը, որ ընդունված էր այդ շրջանում, Աճառյանը ներկայացնում է բարբառների ձևաբանական դասակարգում՝ հիմք ընդունելով բայի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմության եղանակը: Ըստ այդմ՝ նա իրեն հայտնի բարբառները բաժանում է երեք խմբի՝ ա) *Ում* ճյուղի բարբառներ, որոնք սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմում են –ում վերջավորությամբ դերբայով և ունեն նույն մասնիկով կազմվող ներգոյական հոլով, բ) *Կը* ճյուղի բարբառներ, որոնք հիշյալ ժամանակաձևերը կազմում են *կը* նախամասնիկով և ներգոյական հոլով չունեն, գ) *Ել* ճյուղի բարբառներ, որոնք ներկան և անցյալ անկատարը կազմում են անորոշ դերբայով: *Ում* ճյուղի մեջ Աճառյանը ընդգրկում է 7 բարբառ՝ Երևանի (կամ Արարատյան), Տփղիսի (Թիֆլիսի), Ղարաբաղի, Շամախիի, Աստրախանի, Ջուղայի, Ագուլիսի: *Կը* ճյուղի մեջ ընդգրկվում են 21 բարբառ՝ Կարնո, Մշո, Վանա, Տիգրանակերտի, Խարբերդի և Երզնկայի, Շապին-Գարահիսարի, Տրապիզոնի, Համշենի, Մալաթիայի, Կիլիկիայի, Սիրիայի, Արաբկիրի, Ակնի, Սեբաստիայի, Եվդոկիայի, Չմյուռնիայի, Նիկոմեդիայի, Կ. Պոլիսի, Ռոդոսթոյի, Խրիմի, Ավստրո-Հունգարիայի: *Ել* ճյուղը կազմում են երեք բարբառներ՝ Մարաղայի, Խոյի, Արդվինի: Բնականաբար, բարբառագիտական հետազոտությունները հետազայում ի հայտ բերեցին նոր իրողություններ, կատարվեցին տեսական ու

¹⁰ Ջ ա հ ու կ յ ա ն. 1978, 5–6:

¹¹ Ա դ ա յ ա ն. 1976, 59:

գործնական բնույթի որոշ ճշգրտումներ, նոր դասակարգումներ, սակայն Աճառյանի առաջ քաշած ձևաբանական դասակարգման սկզբունքը ներկայում էլ արդիական է և կիրառելի բարբառագիտության ոլորտում: Ինչպես ֆրանսերեն տարբերակում, այնպես էլ «Հայ բարբառագիտություն» հայերեն աշխատությունում ընդգրկված է բարբառագիտական քարտեզ (առաջինը հայ իրականության մեջ), որի մասին հեղինակը գրում է. «Գրուածքիս կցուած է հայ լեզուաբանական քարտէս մը. հոս նշանակուած են մի՛ միայն այն քաղաքները կամ գիւղերը՝ ուր հայեր կան, և առանձին գոյներով ու սահմանագծերով որոշուած է անոնց խօսած լեզուն ու բարբառը»¹²:

Հայ բարբառագիտության ոլորտում Հ. Աճառյանի կարևորագույն աշխատանքներից է 1913 թ. լույս տեսած «Հայերեն գավառական բառարանը», որը ժամանակին հայերենի ամենաընդգրկուն բարբառային բառարանն էր՝ պարունակելով 30 000 բարբառային բառ: Աշխատանքի առաջաբանում Աճառյանը ներկայացնում է իր ուսումնասիրած 31 բարբառային միավորներից յուրաքանչյուրի տարածման վայրերը, բարբառային բառապաշարում առանձնացնում երեք շերտ՝ բուն հայերեն բառեր, օտար բառեր ու գավառական բառեր: Վերջիններս, ըստ հայագետի, օտար լեզուներից փոխառված չեն, հայերեն են, բայց հին մատենագրության մեջ վկայված չեն: Բառարանում ներկայացվում են նաև հայերենի գավառական բառարանների պատմությունը, բարբառների հնչյունական ու քերականական ընդհանուր բնութագրերը: Գավառական բառարանի բառամթերքը մեծ արժեք ու նշանակություն ունի ոչ միայն հայերենի բառապաշարի ամբողջացման առումով, այլ նաև լեզվի պատմության, լեզվամտածողության, լեզվամշակույթի, ճանաչողական լեզվաբանության տարբեր խնդիրների քննարկման ու լուծման տեսանկյունով:

Որևէ լեզու, շփվելով շրջակա լեզուների հետ, չի կարող գերծ լինել փոխառություններից: Եթե լեզուների գրական տարբերակներում փոխառությունները որոշակիորեն սահմանափակվում են, ապա բարբառներում փոխառյալ բառերի ներհոսքը, կարելի է ասել, սովորաբար անվերահսկելի է: Հայերեն բարբառներում ևս հարևան տարբեր լեզուներից կատարված փոխառությունները շատ ու շատ ավելի են, քան գրական լեզվում: Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովուրդը, XI դարից սկսած, բազում հարյուրամյակներ շփվել է թուրքերի հետ՝ թուրքերենից բարբառներում կատարելով բազմաթիվ փոխառություններ: Բարբառագիտական աշխատանքների համար կարևոր համարելով նաև օտար բառերի բառարանների կազմումը՝ Աճառյանը տարիներ շարունակ հավաքում է թուրքերենից փոխառյալ բառերը և 1902 թվին հրապարակում է «Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ» բառարանը, որում ներկայացնում է այդ բառերը Կ. Պոլիսի ժողովրդական լեզվում՝ համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառների: Բառարանը պարունակում է 4200 բառ, բայց նշվում է, որ բուն Հայաստանի բարբառներում փոխառությունների թիվը կարող է լինել դրանց կեսը միայն¹³: Նման բառարանը ուներ ոչ միայն բարբառագիտական,

¹² Ա ճ ա ռ ե ա ն. 1911, 14:

¹³ Ա ճ ա ռ ե ա ն. 1902, 9:

լեզվաբանական արժեք, այլ նաև կոչված էր նպաստելու թուրքական զորեղ ազդեցությունից հայերենը ազատելու, լեզվի մաքրությունը ըստ հնարավորին վերականգնելու գործին: Աճառյանի վկայությամբ՝ Փոքր Ասիայի շատ վայրերում հայերի հոծ զանգվածներ արդեն թրքախոս էին դարձել¹⁴, իսկ աշխարհաբար գրական լեզվի ձևավորման շրջանում գրողները գրում էին ռամկական խոսույն բարբառով, որը լի էր տաճկերեն բառերով, ձևերով, ասացվածներով ու շարահասուությամբ¹⁵: Եվ բնականաբար առաջ է գալիս հակազդեցություն. «... թրքական բառերով ու ոճով գրուածները ծաղրելի ու զգուելի դարձան հայ ականջներուն»¹⁶: Թերևս այս իրողությունն էր պատճառը, որ Աճառյանը հարկ համարեց բարբառային խոսքում նախ և առաջ առանձնացնել թուրքերեն բառերը, բացատրել դրանք ու ներկայացնել հայերեն համարժեքները:

Տասնյակից ավելի բարբառների մենագրական ուսումնասիրությունները Աճառյանի հսկայական ավանդն են հայ բարբառագիտության ոլորտում: Մենագրություններից յուրաքանչյուրում լեզվաբանը նախ ներկայացնում է բարբառի տարածման շրջանները, դրա վերաբերյալ եղած նյութերն ու դիտարկումները: Որևէ բարբառի հնչյունական համակարգը ներկայացնում է գրաբարի հետ համեմատությամբ՝ հնչյուն առ հնչյուն վեր հանելով արտասանական, դիրքային, հնչյունափոխական իրողությունները, բարբառին բնորոշ հնչյունական օրենքներն ու օրինաչափությունները: Նման մոտեցմամբ ի հայտ են բերվում հայերենի պատմական զարգացման ընթացքի յուրօրինակությունները: Բավականին հանգամանորեն Աճառյանը նկարագրում է դիտարկվող յուրաքանչյուր բարբառի ձևաբանական համակարգը ըստ առանձին խոսքի մասերի, նաև կատարում է շարահյուսությանն առնչվող առանձին դիտարկումներ: Բարբառների նկարագրության աճառյանական համակարգում բառապաշարն առանձին քննության չի ենթարկվում, սակայն տարբեր աղիթներով բերվում են բառաշարքեր, ներկայացվում են բառապաշարի հետաքրքրական միավորներ, խոսվում է փոխառությունների մասին: Առանձին բարբառի նվիրված յուրաքանչյուր մենագրություն ավարտվում է գրաբար-բարբառ բառացանկով, որում Աճառյանը ներկայացնում է առավել գործածական գրաբարյան բառաշարը՝ բարբառային համարժեք ձևերով: Բարբառների նկարագրության այս համակարգը, որ հետագայում ընդօրինակվեց շատ հայ բարբառագետների կողմից, թույլ էր տալիս արձանագրել առկա իրողությունները՝ մոռացությունից ու կորստից փրկելով լեզվական երևույթներն ու բարբառային միավորները: Նշենք նաև, որ Աճառյանը բարբառագիտական զգալի նյութ է ներկայացնում «Հայերեն արմատական բառարանում», բարբառների քննությանն անդրադառնում է նաև «Հայոց լեզվի պատմություն» և «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատություններում:

Բարբառների ուսումնասիրության ու նկարագրության, բարբառային փաստերի հավաքման աշխատանքների կարևորության մասին մեծանուն հայագետը գրել է. «Իմ անձնական սուղ միջոցներով ճանապարհորդելով Կովկաս, Տաճկաս-

¹⁴ Ա ճ ա ռ ե ա ն. 1902, 5–6:

¹⁵ Ա ճ ա ռ ե ա ն. 1902, 9:

¹⁶ Ա ճ ա ռ ե ա ն. 1902, 10:

տան և Պարսկաստան, Ռոդոստոյից մինչև Սպահան, ուսումնասիրել են հայերենի գրեթե բոլոր բարբառները, կազմել են 30 բարբառի բառացանկը, որ և հրատարակել են իմ «Արմատական բառարան»-ում: Հրատարակել են 6 հայ բարբառի ամբողջական ուսումնասիրությունը, նյութեր ունեն նաև ուրիշ բարբառների ուսումնասիրության համար, որոնք տպագրության լույսին են սպասում: Իմ ուսումնասիրած բարբառներից 14-ը արդեն անհետացած են՝ 1915 թվականի համաշխարհային պատերազմին զոհ գնալով: Ես փրկել են այդ բարբառները հավիտենական կորստից և նրանց հրատարակությունը մեծ ծառայություն է գիտության համար»¹⁷: Գործնական այս աշխատանքներից զատ՝ Աճառյանը արժարժել է նաև բարբառագիտական տեսական հարցեր: Հատկապես կարևոր են V դարում հայերենի բարբառների գոյության հարցի վերաբերյալ նրա դիտարկումները, որ արվել են «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ: «Մեսրոպյան հայերենը, – գրում է նա, – մեր լեզվի կյանքի մեջ առաջին երևույթի այն առաջին պատկերն է, որ ավանդել է մեզ պատմությունը. նրանից առաջ եղած պատկերները, թեև գիտենք որ կան, բայց մեզ անձանդթ են: Բայց միևնույն ժամանակ, նույն այդ մեսրոպյան շրջանին, պետք է ընդունենք, թե կար նաև երկրորդ երևույթը, այն է զանազան բարբառներ հայերենի մեջ, որոնցից մեկը միայն բարձրացավ գրականության, այն է մեսրոպյան գրավոր հայերենը»¹⁸: Քննելով գրաբարյան շրջանում բարբառների գոյությունը փաստող վկայություններն ու մի շարք լեզվական փաստեր¹⁹ լեզվաբանը եզրակացնում է, որ հինգերորդ դարում հիշատակված են Վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց կարելի է հավելել նաև այսպես կոչված արևելյան և արևմտյան բարբառներ, սակայն այդ բարբառները չունեին իրարից անջրպետող խոշոր տարբերություններ, այնպես որ այդ բարբառները կարելի է կոչել ոչ թե իրապես բարբառ, այլ *ենթաբարբառ*²⁰: Համեմատելով արդի մի շարք բարբառների որոշ իրողություններ գրաբարի հետ՝ Աճառյանը եզրակացնում է. «... գրաբարը ավելի հին է և բարբառները ծագած են նրանից շատ ավելի ուշ»²¹, «Ե դարում կամ նրանից առաջ էլ Հայաստանում խոսվում էր *մի*՝ հայերեն, որի ներկայացուցիչն է գրաբարը: Բարբառների այնպիսի սուր տարբերություններ, ինչպես նկատում ենք այժմ մեր մեջ, չկային, եղածները մանր բաներ էին»²²: Սակայն այս պնդումներից զատ, այլ առիթներով Աճառյանն ունի դիտարկումներ, որոնք էլ, մեր կարծիքով, ներկայացնում են նրա գիտականորեն ավելի հիմնավոր պատկերացումները խնդրո առարկայի վերաբերյալ: Այսպես, շատ արժեքավոր է հայագետի հետևյալ միտքը. «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման

¹⁷ Ա ճ ա ո յ ա ն. 1967, 440:

¹⁸ Ա ճ ա ո յ ա ն. 2013, 114–115:

¹⁹ Ա ճ ա ո յ ա ն. 2013, 115–134:

²⁰ Ա ճ ա ո յ ա ն. 2013, 134:

²¹ Ա ճ ա ո յ ա ն. 2013, 380:

²² Ա ճ ա ո յ ա ն. 2013, 383:

են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ»²³: Իսկ Գավառական բառարանի առաջաբանը սկսվում է հետևյալ մտքով. «Չկայ աշխարհիս մեջ լեզու մը որ բարբառներ չունենայ»²⁴: Բարբառի աճառյանական ըմբռնումը ամբողջացնելու իմաստով կարևոր է նաև նրա հետևյալ դիտարկումը. «Բարբառները բոլորն էլ իրար հավասար են. բայց հենց որ նրանցից մեկը իշխանության գլուխ անցավ, սկսում է տիրել անհավասարության զգացմունքը: Խոսողները իրենք են սկսում արհամարհել իրենց լեզուն և զգում են այն՝ ստորին աստիճանի վրա: Սկսում է տիրել այն սխալ կարծիքը, թե բարբառը մայրաքաղաքի լեզվից ցածր է արժանիքով ու պատվով և կամ տիրող կամ գրական լեզվի հետին աղավաղյալ ծնունդն է: Լեզվաբանի համար բոլոր բարբառներն էլ ներկայացնում են մի տիպի շարունակական ձևափոխությունները: Լեզուն, կամ նաև գրական լեզուն էլ բարբառներից մեկն է և հաճախ ավելի ուշ կազմված, քան մի ուրիշ բարբառ: Տգիտություն է բարբառներից մեկը մյուսին ստորադաս համարելը: Որևէ լեզվի պետական լինելը (քաղաքական պատիվ) կամ ճոխ գրականությամբ մշակված լինելը (գրական պատիվ) արժեք չունի գիտության համար: Բոլոր արդի լեզուներն էլ մի ժամանակ բարբառ էին մի ուրիշ, այս կամ այն ավելի հին լեզվի, իսկ հին լեզուները նույնպես բարբառ էին զանազան մայր լեզուների և այլն: Եթե կա նախապատվության զգացմունքը բարբառների միջև, ինքնին հասկանալի է, որ նույնը ավելի մեծ չափերով պիտի լինի նաև լեզվից լեզու և հատկապես տիրող ազգերի և նվաճված ազգերի լեզվի միջև»²⁵:

Աճառյանը հայոց լեզվի պատմություն գիտաճյուղի հիմնադիր

Հսկայական է Հ. Աճառյանի ավանդը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում, հայ իրականության մեջ նա համարվում է այդ գիտաճյուղի հիմնադիրը նույնպես: Այս ուղղության նրա հիմնական աշխատությունը «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր ուսումնասիրությունն է, որի առաջին հատորը լույս է տեսել 1940 թվին, երկրորդ հատորը՝ 1951 թվին: Կարելի է ասել՝ աշխատության հենց առաջին պարբերությամբ Աճառյանը ներկայացնում է իր ուսումնասիրության հիմնական նպատակները. «Պատմել մի որևէ լեզվի պատմությունը՝ նշանակում է նկարագրել այն բոլոր ձևափոխությունները, որոնց ենթարկվել է այդ լեզուն իր գոյության ընթացքում, սկսած իր նախնական շրջանից մինչև տվյալ թոպեն: Այդ ձևափոխությանը ամենամեծ մասը առաջացած է լինում ներքին, այսինքն բնական ճանապարհով, իբրև արդյունք բարեշրջության (էվոլյուցիայի) և բնական զարգացման, մի ուրիշ ստվար մասը առաջացած է լինում արտաքին ճանապարհով, այսինքն փոխառությամբ, իբրև արդյունք օտար ազդեցությանց, և վերջապես՝ երրորդ, ավելի փոքր մասը առաջացած է լինում անհատական ճանապարհով, այսինքն գրական նորամուծություններով: Այսպիսով՝ ամեն մի ձևափոխություն ունի իր բուն

²³ Ա ճ ա ո յ ա ն. 2013, 324–325:

²⁴ Ա ճ ա ո ճ ա ն. 1913, 1:

²⁵ Ա ճ ա ո յ ա ն. 1955, 140:

պատճառը՝ ներքին, արտաքին կամ անհատական, որոնց միջոցով էլ լեզվի պատմությունը կապվում է նույն ազգի քաղաքակրթության պատմության, քաղաքական պատմության և գրականության պատմության հետ»²⁶: Լեզվի պատմության այս ըմբռնումով էլ Աճառյանը ներկայացնում է հայոց լեզվի պատմական զարգացումը. նախ անդրադառնում է հնդեվրոպական նախաշրջանին, քննում նախալեզվին, հնդեվրոպացիների նախահայրենիքին ու մշակույթին առնչվող հարցեր: Հայագետը իրավացիորեն նշում է, որ «Ամեն լեզու՝ որ խոսվում է մի բավական ընդարձակ տարածության վրա և քաղաքական ու կուլտուրական զանազան միջոցներով մի ընդհանուր միություն ստեղծելու կարողություն չունի, բաժանված է լինում ավելի կամ նվազ թվով բարբառների: Այսպես պետք է լիներ նաև հնդեվրոպական նախալեզուն»²⁷: Բառային, հնչյունական ու քերականական 16 զուգաբանությունների միջոցով Աճառյանը քննում է հնդեվրոպական բարբառների փոխհարաբերությունները և հանգում եզրակացության, որ այդ լեզուները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ա) արևելյան ճյուղ՝ արիական, բայթիկ-սլավական, հայկական (և այբանական) լեզուներ, բ) արևմտյան ճյուղ՝ իտալական, կելտական և գերմանական լեզուներ, իսկ հունարենը գրավում է միջին դիրքը²⁸: Ըստ Աճառյանի՝ «... հայերենը կանգնած է արիական, հունական և սլավական լեզուների միջև ...»²⁹: Աշխատության առաջին մասում Աճառյանը ներկայացնում է հայերենի հնդեվրոպական ծագման բառերի ցանկը՝ համապատասխան նախածնի և ցեղակից լեզուների զուգահեռներով հանդերձ: Ապա այդ բառերը խմբավորում է ըստ իմաստային դաշտերի և դրանց քննությամբ բնութագրում հին հայկական քաղաքակրթությունը: Այնուհետև պատմական հաջորդականությամբ ներկայացվում են տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Ներկայացվում են էգեյական քաղաքակրթության, հաբերենի (խեթերեն), թրակերենի, փոյուգերենի և փոքրասիական այլ լեզուների, խալդերենի (ուրարտերեն), միտաներենի, ասուրերենի, Հայաստանի այլ բնիկների և կովկասյան լեզուների, իրանական, հռոմեական (լատինական), ասորական ազդեցությունները հայերենի վրա: Գրքի երկրորդ հատորում Աճառյանը բերում է հունարենից, ասորերենից, արաբերենից, վրացերենից, թուրքերենից, հին և նոր եվրոպական լեզուներից, ռուսերենից հայերենում կատարված փոխառությունները: Այս հատորում փաստական հարուստ նյութով ներկայացվում են հայերենի քերականական համակարգում կատարված փոփոխությունները, փորձ է արվում որոշելու դրանց մոտավոր ժամանակաշրջանը, նաև՝ պատճառներն ու նպաստող գործոնները: Հեղինակը դիտարկում է տեղաշարժերը գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբարյան համակարգերում, քննության ենթարկում բարբառներին առնչվող հարցեր: Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը բարձր է գնահատել նշանավոր լեզվաբան Է. Աղայանը. «... հեղինակը ամբողջական կերպով ուսումնասիրել է հայերենագիտության այս ճյուղը, հանրագումարի բերելով նախորդ

²⁶ Աճ ա ո յ ա ն. 1940, 7:

²⁷ Աճ ա ո յ ա ն. 1940, 23:

²⁸ Աճ ա ո յ ա ն. 1940, 29:

²⁹ Աճ ա ո յ ա ն. 1940, 31:

շրջանում արվածը՝ խստագույն գիտական քննության բովով անցկացնելով այն և իր կողմից ավելացնելով սեփական հետազոտությունների բազմարդյուն արգասիքը»³⁰:

Հայերենի պատմական քննության ոլորտին են վերաբերում նաև Աճառյանի կոթողային բառարանները՝ «Հայերեն արմատական բառարանը» (1926–1932 թթ.՝ ապակետիպ հրատարակությամբ վեց հատոր, 1935 թ.՝ հավելվածային հատոր)³¹ և «Հայոց անձնանունների բառարանը» (1942–1962 թթ.՝ հինգ հատոր): Արմատական բառարանը, որի կազմման աշխատանքներով Աճառյանը զբաղվել է շուրջ քառասուն տարի, պարունակում է այն բոլոր տեղեկությունները, որոնք հայտնի էին հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ հանդիպող մոտ տասնմեկ հազար արմատների վերաբերյալ: Բառարանի յուրաքանչյուր բառահոդված բաղկացած է 5 բաժնում ընդգրկված հանգամանալի տեղեկություններից, ինչպիսիք են՝ բառի բացատրություն, քերականական ձևերի հնագույն վկայություններ, ձեռագրական տարբերակներ, ածանցյալ ձևեր, հավանական ստուգաբանություններ, ստուգաբանությունների սպառիչ պատմություն, բարբառային տարբերակներ և հայերենից այլ լեզուների կատարած փոխառյալ ձևեր: Ընդ որում՝ Աճառյանի հաշվումներով՝ 1604 ստուգաբանությունների հեղինակը ինքն է, և դրանցից 136-ը բնիկ հայերեն բառեր են: Իր այս աշխատանքի վերաբերյալ հայագետը գրել է, որ արմատական բառարաններ ունեն հունարենը, լատիներենը, այբաներենը, սլավական լեզուները, պարսկերենը, լիթվաներենը, թուրքերենը, «բայց իմ «Արմատական բառարան»-ը իր մեծությամբ գերազանցում է բոլորից»³²: Ապա բերում է Արմատական բառարանի մասին Ա. Մեյեի դիտարկումը. «Ո՛չ մի երկիր, ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի լեզու նման կատարյալ աշխատություն չի արտադրած»³³: Հայ լեզվաբանական միտքը ևս խիստ բարձր է գնահատել Արմատական բառարանը: Ըստ Է. Աղայանի՝ ««Հայերեն արմատական բառարանը» ամփոփումն է հայկական ստուգաբանության ու բառաքննության. նրա մեջ ամփոփված է այն ամենը, ինչ որ որևէ ժամանակ, որևէ մեկի կողմից, որևէ հայերեն բառի մասին ասված է. դրա շնորհիվ է, որ այս աշխատությունը դարձել է հայագիտության ամենաարժեքավոր գործերից մեկը»³⁴: Իսկ Գ. Ջահուկյանը համարել է, որ «... Աճառյանի աշխատությունների թագն ու պսակը նրա հոյակապ «Հայերեն արմատական բառարանն» է ...»³⁵: Հավելենք, որ Աճառյանը, ինչպես ինքն է վկայում, Արմատական բառարանի նյութերի հիման վրա է գրել «Հայոց լեզվի պատմությունը»³⁶:

³⁰ Ա ղ ա յ ա ն. 1976, 55:

³¹ «Հայերեն արմատական բառարանը» 1971–1979 թթ. հրատարակվել է 4 հատորով:

³² Ա ճ ա ո յ ա ն. 1967, 440:

³³ Ա ճ ա ո յ ա ն. 1967, 440:

³⁴ Ա ղ ա յ ա ն. 1976, 53:

³⁵ Ջ ա հ ու կ յ ա ն. 1978, 7:

³⁶ Ա ճ ա ո յ ա ն. 1967, 441:

Ինչպես հայ բանասիրության, այնպես էլ հայ ժողովրդի պատմության համար մեծ կարևորություն ունի Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», որի կազմումը ևս տևել է տասնամյակներ՝ սկսվելով 1910 թվից ու հասնելով մինչև 40-ական թվականներ: Բառարանի հինգ հատորներում ընդգրկված են հայության մեջ հնուց մինչև 1500 թ. գործածված անձնանունները, որոնք Աճառյանը քաղել է մատչելի բոլոր աղբյուրներից: Բառարանը ներկայացնում է անձնանունները կրողների վերաբերյալ պատմական և ստուգաբանական տեղեկություններ, բանասիրական նշումներ: Բառարանում կան 1500 թ. հետո գործածված անձնանուններ ևս, բայց դրանք միայն նշանավոր անձերի անուններ են և չունեն տեղեկությունների նույն հարստությունը: Իր այս աշխատանքի մասին Աճառյանը իրավացիորեն գրել է. «Այսպիսի ընդարձակ ծավալով ու մանրամասնությամբ և բծախնդիր ճշտությամբ աշխատություն ոչ մի լեզվի մեջ գոյություն չունի»³⁷: Բացի այդ՝ «Անունների բառարաններ ուրիշ լեզուներով էլ կան, բայց նրանք ընդհանրապես պատմական-կենսագրական են (ինչպես օրինակ բոլոր Հանրագիտակ բառարանները) և ո՛չ թե լեզվաբանական-բանասիրական»³⁸:

«Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը

Հայագիտության խնդիրները Աճառյանը դիտարկել է նաև ընդհանուր ու համեմատական լեզվաբանության շրջանակներում: Դեռ երիտասարդ տարիներին իր առաջադրած ծրագիրը (գրել համապարփակ մի աշխատություն, որը կներառեր և՛ ընդհանուր լեզվաբանության, և՛ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության, և՛ հայերենի պատմական ու համեմատական քերականության խնդիրներ) հայագետը շուրջ քառասուն տարվա տքնաջան աշխատանքով իրականացրել է գիտական ամենաբարձր մակարդակով, աներևակայելի լայն ու խորը ընդգրկումով: «Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների» վերնագիրը կրող հսկայածավալ աշխատությունը պետք է բաղկացած լիներ 10 հատորից՝ «Ներածություն», «Ձայնագիտություն», «Գոյական», «Ածական և թվական», «Դերանուն», «Բայ», «Դերբայ, նախադրություն, մակբայ, շաղկապ», «Շարահյուսություն», «Բառագիտություն», «Իմաստաբանություն»: Աճառյանի կենդանության օրոք հրատարակվել է աշխատության միայն մեկ հատոր (1952 թ.), ևս վեց հատորներ, է. Աղայանի խմբագրությամբ, հրատարակվել են մինչև 1971 թվականը: «Լիակատար քերականության» վերջին երեք հատորները (Շարահյուսություն, Բառագիտություն, Իմաստաբանություն) Աճառյանը չի հասցրել վերջնականապես ամփոփել՝ թողնելով անմշակ նյութեր, հրապարակման պատրաստ առանձին հատվածներ, որոնք ի մի բերել և մեկ հատորով տպագրության են պատրաստել Խ. Բաղիկյանը և Ս. Գալստյանը (2005 թ.): Ինչևէ, թեկուզև ինչ-որ առումով անավարտ մնացած, բայց և այնպես՝ «Լիակատար քերականություն»-ը նախադեպը չունեցող կոթողային աշխատություն է, որն ունի հանրագիտարանային արժեք

³⁷ Ա ճ ա ո յ ա ն. 1942, IX:

³⁸ Ա ճ ա ո յ ա ն. 1942, XIV–XV:

ինչպես հայերենագիտական, այնպես էլ ընդհանուրլեզվաբանական առումներով: Ի դեպ, աշխատանքի դեռևս մի մասը շարադրած լինելով՝ Աճառյանը լավ գիտեր իր գործի արժեքը. «Իմ ամենամեծ գործը կլինի սակայն «Ընդհանուր քերականություն»-ը, որ աշխարհիս բոլոր ծանոթ լեզուների համեմատական քերականությունն է: Պիտի բովանդակի 562 լեզվի քերականություն: Առ այժմ կազմել եմ 139 լեզվի համեմատությունը: Ենթադրում եմ, որ գործը կունենա 8000 էջ, որի առաջին կեսը արդեն գրել եմ: Նման տիպի գործ չի տեսած գիտությունը»³⁹: Քերականության «Ներածություն» հատորում հեղինակը անդրադառնում է լեզվաբանության բոլոր կարևորագույն տեսական հարցերին՝ ներկայացնելով իր տեսակետները: «Ձայնագիտություն» հատորում Աճառյանը նախ անդրադառնում է հնչարտաբերական իրողություններին, փորձառական հնչյունաբանության ժամանակի մեթոդներին ու գործիքներին, աշխարհի տարբեր լեզուներում գործածական հնչյունների տեսակներին և դրանց արտաբերական յուրահատկություններին, վեր հանում հնդեվրոպական նախալեզվի և հայերենի հնչյունական դրությունը: Ապա ներկայացնում է հնչյունափոխական իրողությունները տարբեր լեզուներում, այնուհետև՝ հնդեվրոպական լեզուներում տեղի ունեցած հնչյունափոխությունները, հայերենի հնչյունների համապատասխանությունները հնդեվրոպական նախալեզվում, հնչյունափոխական իրողությունները գրաբարում, միջին հայերենում և նոր հայերենում: Է. Աղայանի խմբագրությամբ լույս տեսած մյուս հատորներից յուրաքանչյուրը նվիրված է մեկ կամ ավելի խոսքի մասերի, և բոլորն էլ ունեն նույն կառուցվածքը. յուրաքանչյուր հատոր սկսվում է համապատասխան խոսքի մասի վերաբերյալ ընդհանուր ներածական տեսությամբ, որին հաջորդում է ընդհանուր լեզվաբանական քննությունը 562 լեզուների ընձեռած տվյալների ըստ հարկի օգտագործմամբ: Այնուհետև կատարվում է համեմատական լեզվաբանական հետազոտություն հնդեվրոպական լեզուների շրջանակում: Հայերենի համեմատական քերականությանը վերաբերող դիտարկումներից հետո Աճառյանը իրողությունները քննում է հայերենի պատմական քերականության շրջանակում՝ ընդգրկելով հայերենի տարածաժամանակային բոլոր դրսևորումները՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, բարբառներ: Ինչպես նկատել է Է. Աղայանը, այս աշխատության մեջ Աճառյանն ամփոփում ու հանրագումարի է բերում շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենի համեմատական ու պատմական քերականությանը նվիրված հետազոտությունների արդյունքները՝ մանրամասն ու գիտական խորագույն քննության ենթարկելով հայագետների արտահայտած կարծիքները քննարկվող հարցերի մասին, ի մի բերելով նաև իր երկարամյա հետազոտությունների արդյունքները⁴⁰:

Հայոց գրերի գյուղի առեղծվածը

Աճառյանի մեծարժեք աշխատություններից հիշատակելի է նաև «Հայոց գրերը» հետազոտությունը, որը 1904 թ. արժանացել է Լազարյան ճեմարանի

³⁹ Ա ճ ա ռ յ ա ն. 1967, 441:

⁴⁰ Ա ղ ա յ ա ն. 1976, 57–58:

մրցանակին: Աշխատությունը նվիրված է Մաշտոցի կենսագրությանը, հայ գրերի գյուտին, գրերի պատմությանը վերաբերող աղբյուրների քննությանը: Հեղինակը հավաքել ու ամփոփել է V դարից ի վեր մատենագրական աղբյուրներում արձանագրված տեղեկությունները հայոց գրերի և դրանց ստեղծման հանգամանքների վերաբերյալ, ապա բանասիրական ու լեզվաբանական քննության ենթարկել նաև հետագա հետազոտողների տեսակետներն ու կարծիքները: Մեջբերելով ու մերժելով եղած տարբեր տեսակետներն այն մասին, իբրև թե Մաշտոցը ոչ թե այբուբենն ամբողջությամբ է հորինել, այլ ընդամենը լրացրել է դանիելյան նշանագրերը՝ Աճառյանը իրավացիորեն գտնում է, որ Կորյունը հարազատորեն է ներկայացրել հայոց գրերի գյուտի պատմությունը, և մի շարք փաստարկներ բերելով՝ տրամաբանական հարց է տալիս. «... իրաւացի՞ է արդեօք մէկ կողմ ձգել հնագոյն եւ գրի գիտին ժամանակակից պատմիչները եւ 600 կամ 800 տարի յետոյ եկող անձերու պատմածին կարեւորութիւն տալ ...»⁴¹: Այնուհետև, համոզված լինելով, որ վրացերենի այբուբենը ևս Մաշտոցն է հորինել, լեզվաբանն ավելացնում է՝ ով որ աչք ունի համեմատելու հայերեն և հին վրացերեն գրերը, պարզ կտեսնի, որ դրանք մեկ ոճ, նկարչական մեկ դրություն ունեն, հետևաբար մեկ ձեռքի շնորհք, միևնույն մարդու ձեռակերտն են. այնտեղ չկա երկու գրություն՝ մեկը դանիելյան, մյուսը՝ մեսրոպյան: Ըստ Աճառյանի՝ տառեր ավելացնելու մասին խոսող պատմիչները ոչ թե իրականությունն են ներկայացնում, այլ իրենց բանասիրական մտածողության արդյունքը⁴²:

Եզրակացություն

Դիտարկված աշխատությունները, անշուշտ, ընդամենը մի կարևոր մասն են Աճառյանի բոլոր ուսումնասիրությունների, բայց, կարծում ենք, ներկայացվածն էլ բավական է՝ պատկերացում կազմելու հայ գիտության և ընդհանրապես լեզվաբանության բնագավառում Աճառյան գիտնականի ունեցած աներևակայելի մեծ դերի ու կշռի վերաբերյալ: Ընդհանուր և հայ լեզվաբանության տարբեր ուղղություններում Հ. Աճառյանի հսկայական ներդրումը գիտնականների քանի ու քանի սերունդների համար հետազոտություններ կատարելու հաստատուն հիմք ու մեկնակետ է դարձել և դեռ բազում սերունդների համար է կատարելու այդ դերը:

Վիկտոր Կատվայան – ք. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ բարբառագիտություն, լեզվաբանական աշխարհագրություն, հնչյունաբանություն, բառագիտություն, բառարանագրություն, լեզվի պատմություն, ճանաչողական լեզվաբանություն: Հեղինակ է 15 գրքի և 100-ից ավելի հոդվածների:
 ORCID: 0009-0002-2597-4808. viktorkatvalyan@mail.ru

⁴¹ Ա ճ ա ու ե ա ն. 1928, 162:

⁴² Ա ճ ա ու ե ա ն. 1928, 163:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է. 1976, Հրայա Աճառյան. – ՊԲՀ, № 1, էջ 43–60 [Aghayan E. 1976, Hrachya Acharyan. – HPh], № 1, p. 43–60 (in Armenian)]:

Աճառեան Հ. 1902, Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Մոսկուա–Վաղարշապատ, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 381 էջ [Acharyan H. 1902, Words borrowed from Turkic into Armenian. Moscow–Vagharsapat, published by Lazaryan Seminary of Eastern Languages, 381 p. (in Armenian)]:

Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով). – «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկվա–Նոր Նախիջևան, հրատ. Լազարյան ճեմարանի արևելյան լեզվաց, 1911, 307 էջ [Acharyan H. 1911, Armenian dialectology: Outline and arrangement of Armenian dialects (with dialectological map). – “Eminyan ethnographic collection”, V. 8. Moscow–Nor Nakhichevan, published by Lazaryan Seminary of Eastern Languages, 1911, 307 p. (in Armenian)]:

Աճառեան Հ. 1913, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1141 էջ [Acharyan H. 1913, Armenian Provincial Dictionary. Tiflis, Published by Lazaryan Seminary of Eastern Languages, 1141 p. (in Armenian)]:

Աճառեան Հ. 1928, Հայոց գրերը, Վիեննա, Մխիթարյան տպարան, 495 էջ [Acharyan H. 1928, Armenian Letters. Vienna, Mkhitarayan Printing House, 495 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1940, Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, Պետական համալսարանի հրատ., 357 էջ [Acharyan H. 1940, History of the Armenian Language, Part I. Yerevan, State University Press, 357 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, Պետական համալսարանի հրատ., 633 էջ [Acharyan H. 1942, Dictionary of Armenian Personal Names, vol. A. Yerevan, State University Press, 633 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1955, Լիակատար քերականություն հայոց լեզվի: Ներածություն, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 655 էջ [Acharyan H. 1955, Complete Grammar of the Armenian Language. Introduction. Yerevan, Press of the Academy of Sciences of the Armenian SSR, 655 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1967, Կյանքիս հուշերից, Երևան, «Միտք» հրատ., 458 էջ [Acharyan H. 1967, From the Memories of My Life. Yerevan, “Mitq” Press, 458 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 2013, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, ԵՊՀ հրատ., 624 էջ [Acharyan H. 2013, History of the Armenian Language, Part II. Yerevan, YSU Press, 624 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. 1978, Հրայա Աճառյան. – «Լեզվի և ոճի հարցեր» (Երևան), էջ 5–14 [Jahukyan G. 1978, Hrachya Acharyan. – “Issues of Language and Style” (Yerevan), p. 5–14 (in Armenian)]:

РАЧИЯ АЧАРЯН: ЖИЗНЬ И НАУЧНЫЙ ПОДВИГ

ВИКТОР КАТВАЛЯН

Резюме

Ключевые слова: диалект, история языка, общее языкознание, словарь, Мейе, Хюбшман, антропоним, индоевропейские языки, полная грамматика.

Многочисленные научные труды гениального армянского лингвиста Рачия Ачаряна (1876–1953) охватывают все сферы изучения армянского языка. Он является основоположником таких научных дисциплин, как история армянского языка, армянская диалектология и экспериментальная фонетика армянского языка. Фундаментальные работы Р. Ачаряна в области армянской лексикографии, этимологии армянского языка, изучения армянских личных имён, исторической и сравнительной грамматики армянского языка, типологико-сопоставительных исследований и многих других направлений имеют основополагающее значение для арменистики. Огромен педагогический вклад выдающегося арменоведа. На протяжении длительной преподавательской и лекционной деятельности он передавал свои знания многим поколениям учеников и аспирантов.

Насколько он был велик как учёный, настолько же был благороден как человек. Ему были присущи неиссякаемая доброта и человеколюбие, доброжелательность, патриотизм, простота в общении и скромность. Р. Ачарян отличался также тонким чувством юмора, жизнерадостностью и заботливым отношением к людям.

Неоценим вклад Р. Ачаряна в различные направления общего и армянского языкознания, ставший основой и отправной точкой для научных исследований многих поколений учёных, и таковым он будет и в дальнейшем.

Виктор Катвалян – д. филол. н., директор Института языка имени Гр. Ачаряна НАН РА. Научные интересы: диалектология, лингвистическая география, фонология, лексикология, лексикография, история языка и когнитивная лингвистика. Автор 15 книг и более 100 статей.

ORCID: 0009-0002-2597-4808. viktorkatvalyan@mail.ru

HRACHYA ACHARYAN: LIFE AND SCIENTIFIC ACHIEVEMENT

VIKTOR KATVALYAN

Summary

Keywords: dialect, history of language, general linguistics, dictionary, Meillet, Hübschmann, anthroponym, Indo-European languages, complete grammar.

The numerous scientific works by Hrachya Acharyan (1876-1953) cover all domains of the study of the Armenian language. He is the founder of such scientific disciplines as the history of the Armenian language, Armenian dialectology, and experimental phonetics of Armenian language. Hr. Acharyan's monumental contributions to Armenian lexicography, etymology of the Armenian language, the study of Armenian personal names, historical and comparative grammar of the Armenian language, typological and contrastive research, and many other fields are of fundamental importance to Armenian studies. The pedagogical legacy of the eminent Armenologist is immense. Throughout his long-standing teaching and lecturing career, he fully imparted his knowledge to numerous generations of students and postgraduate researchers.

How great was he as a scientist, just as noble was he as a person. He was distinguished by inexhaustible kindness and humanism, benevolence, patriotism, simplicity in communication, and modesty. Hr. Acharyan was also noted for his subtle sense of humor, cheerfulness, and care for others.

Hr. Acharyan's enormous contribution to various fields of general and Armenian linguistics has become a solid foundation and starting point for scientific research for many generations of scholars and will continue to be so in the future.

Viktor Katvalyan – Doctor of Sciences in Philology, Director of the Institute of Language after Hr. Acharian of NAS RA. Scientific interests: dialectology, linguistic geography, phonology, lexicology, lexicography, history of language, and cognitive linguistics. Author of 15 books and over 100 articles.

ORCID: 0009-0002-2597-4808. viktorkatvalyan@mail.ru